



**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**  
**ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ**

**«ՄԱՆԿԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵԹԵՐԱՊԻԱ»**  
**(առկա ուսուցում)**

**2020-2022թթ.**

**Մագիստրոսի կրթական**  
**ծրագրի համառոտ նկարագիր**

## ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ծրագրի նպատակն է նախապատրաստել մանկական հոգեբանության և հոգեթերապիայի ոլորտում տեսամեթոդաբանական և կիրառական խնդիրներով զբաղվող մասնագետներ, որոնք ունակ կլինեն.

- ուսումնասիրել երեխայի զարգացման օրինաչափությունները, նոր մոտեցումները,
- ուսումնասիրել երեխայի զարգացման առանձնահատկությունները՝ կրթության ոլորտում բարելավումներ իրականացնելու համար,
- կազմակերպել հոգեբանական աջակցության ծառայություն՝ իրականացնելով հոգեախտորոշիչ, հոգեկարգավորիչ, և զարգացնող աշխատանք երեխայի զարգացման տարբեր փուլերում, ինչպես նաև կազմակերպելով խորհրդատվական և հոգեթերապևտիկ աշխատանքներ զարգացման, հոգեբանական, վարքային և հուզական, ընտանեկան դժվարություններ ունեցող երեխաների և դեռահասների հետ:

## ԾՐԱԳՐԻ ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

### Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն

1. Ներկայացնել հիմնարար գիտելիք մանկության շրջանի տարբեր փուլերում զարգացման առանձնահատկությունների, գործընթացների և օրինաչափությունների վերաբերյալ,
2. Սահմանել մանկական հոգեբանության ժամանակակից տեսությունները և մեթոդաբանական հիմքերը,
3. Ներկայացնել երեխաների հետ հոգեախտորոշիչ և հոգեշտկող աշխատանքի իրականացման սկզբունքները և մեթոդները,
4. Բնութագրել խորհրդատվական և հոգեթերապևտիկ աշխատանքի իրականացման սկզբունքները և առանձնահատկությունները տարբեր հոգեբանական դժվարությունների դեպքում,
5. Սահմանել զարգացման խանգարումների առաջացման գործոնները և աշխատանքի առանձնահատկությունները:

### Բ. Գործնական մասնագիտական կարողություններ

1. Նախագծել մանկական հոգեբանության ժամանակակից հիմնախնդիրներին վերաբերող հետազոտական կիրառական ծրագրեր,
2. Ուսումնասիրել երեխայի զարգացման առանձնահատկությունները սոցիալ-մշակութային գործոնների ներքո և վերլուծել ընտանիքի դերը երեխայի անձի զարգացման գործընթացում
3. Կիրառել հոգեախտորոշիչ մեթոդներ ինչպես օրինաչափ զարգացում ունեցող, այնպես էլ ախտաբանական խնդիրներ ունեցող երեխաների և դեռահասների հետ աշխատանքում,
4. Կիրառել հոգեշտկողական և հոգեթերապևտիկ մեթոդները զարգացման տարբեր խնդիրներով երեխաների և նրանց շրջապատող մեծահասակների հետ աշխատանքում,
5. Իրականացնել խորհրդատվական և լուսավորչական աշխատանք (psychoeducation) տարբեր խնդիրների դեպքում թե երեխաների, թե նրանց հետ աշխատող մեծահասակների հետ:

**Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ**

1. Համագործակցել հարակից ոլորտների մասնագետների հետ,
2. Արդյունավետորեն պլանավորել և կառավարել ժամանակը (time-management), Պատրաստել զեկուցումներ, ներկայացնել հետազոտությունների արդյունքները, վարել գիտական բանավեճեր,
3. Պահպանել մասնագիտական էթիկայի նորմերը:

**ԾՐԱԳՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ**

Ընդհանուր դասընթացներ (պարտադիր)	Կրեդիտ
Օտար լեզու- 1	6
Օտար լեզու- 2	3
Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական ոլորտում	3
Հետազոտության պլանավորում և մեթոդներ	3
<b>Մասնագիտական դասընթացներ</b>	
Մասնագիտության արդի հիմնախնդիրները/ Մանկական հոգեբանություն և հոգեթերապիա/	3
Անձի ժամանակակից տեսություններ	6
Մանկան զարգացման կիրառական հարցեր	6
<b>Մասնագիտական դասընթացներ (պարտադիր)</b>	
Մանկական հոգեախտորոշում	3
Կրթության հոգեբանության կիրառական հարցեր	3
Զարգացման դժվարություններ ունեցող երեխաների գնահատում	3
Մանկություն. փիլիսոփայական և պատմա-մշակութային ասպեկտներ	3
Հոգեֆիզիկական զարգացման խանգարումներ ունեցող երեխաների հոգեբանություն	6
Մանկական հոգեթերապիա	6
<b>Մասնագիտացման առարկաներ (կամընտրական)</b>	
Ավագաթերապիա	3
Հեքիաթաթերապիա	3
Երեխայի առողջության հոգեբանություն	3
Հոգետրավման մանկության շրջանում	3
Պրենատալ հոգեբանություն	3
Դեռահասների խորհրդատվություն	3
Զարգացման դժվարություններ ունեցող երեխաների սոցիալ-հոգեբանական աջակցություն	6
Արդյունավետ ծնողավարություն և ծնողական խորհրդատվություն	6
Արտ-թերապիան երեխաների հետ	6

## ԾՐԱԳՐՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Հարությունյան Սվետլանա	հ.գ.դ., պրոֆեսոր
Խաչատրյան Նարինե	հ.գ.թ., դոցենտ
Խանամիրյան Իրինա	հ.գ.թ., դոցենտ
Կարապետյան Լիլիթ	հ.գ.թ., դասախոս
Անտոնյան Սիրանուշ	հ.գ.թ., դասախոս
Աղաբեկյան Լուսինե	դասախոս
Հակոբջանյան Աննա	դասախոս
Աբրահամյան Տաթևիկ	դասախոս
Խաչիրաբայան Մոսե	դասախոս

Ծրագրի ղեկավար՝ **հ.գ.թ., դոցենտ Իրինա Խանամիրյան**

### ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ և ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պրակտիկան կազմակերպվում է գիտական ղեկավարի հետ համատեղ կազմված և ծրագիրն իրականացնող ամբիոնի կողմից հաստատված ծրագրով: Տվյալ մագիստրոսական ծրագրի ուսանողների պրակտիկան կրում է մասնագիտական գործնական բնույթ՝ լայն հնարավորություն ընձեռնելով ձեռք բերելու համապատասխան գիտելիքներ և մարզելու իրենց մասնագիտական հմտություններն ու կարողությունները: Ուսանողական պրակտիկան հիմնականում կարող է անցկացվել հոգեբանական կենտրոններում և կրթական հաստատություններում: Դրանցից են՝

- ԵՊՀ Կիրառական հոգեբանության կենտրոն,
- Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոններ,
- «Երևանի Անանիա Շիրակացու անվան Ճեմարան» կրթահամալիրի հոգեբանական ծառայության կենտրոն,
- «Arpi's place» մանկական կենտրոն «Երանգ Artstudio» մանկական ուսումնական կենտրոն,
- Երևանի «Ձատիկ» երեխաների աջակցության կենտրոն,
- «Փոքրիկ իշխան» կրթահամալիր:

### ԱՊԱԳԱ ԿԱՐԻԵՐԱՅԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Մանկական հոգեբանություն և հոգեթերապիա» ծրագիրը հնարավորություն կտա շրջանավարտներին աշխատելու որպես

- նախակրթական հաստատությունների հոգեբան
- դպրոցական հոգեբան
- ծնողավարման հարցերով խորհրդատու
- մանկան և դեռահասների հոգեբան-խորհրդատու
- ներառական կրթության բազմապրոֆիլային թիմի հոգեբան
- զարգացման կենտրոնների հոգեբան և այլ:

Շրջանավարտները կարող են աշխատել հետևյալ հաստատություններում՝ հիմնական և ավագ դպրոցներ, հատուկ ծրագրով ուսուցմամբ կրթական հաստատություններ, զարգացման խանգարումներ ունեցող երեխաների հատուկ դպրոցներ, մանկական խնամքի և պաշտպանության կենտրոններ, մանկական վերականգնողական հաստատություններ, հոգեբանական ծառայության կենտրոններ, մասնագիտական կողմնորոշման կենտրոններ՝ իրականացելով *անհատական և/կամ խմբային խորհրդատվական, զարգացնող, հոգեախտորոշիչ և հոգեկախարզելիչ* աշխատանքներ: Ծրագիրը հնարավորություն է ընձեռնում նաև շրջանավարտներին իրականացնելու մասնավոր պրակտիկա երեխաների և դեռահասների հետ: Ծրագրի շրջանավարտները կարող են շարունակել իրենց ուսումը ԵՊՀ Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի ասպիրանտուրայում: